«ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ...». ԸՍՏ ԺԸ ԴԱՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻ ՍԿԶԲՆԱՂԲԻՒՐԻ

Գոհար Մխիթարեան

Պատմական սկզբնաղբիւրները որպէս պատմական յիշողութիւն փոխանցելու միջոց պահելու խնդիրը մեծ ուշադրութիւն է յարուցում ինչպէ՛ս պետութեան, այնպէ՛ս էլ հասարակութեան կողմից: Դա յատկապէս արդիական է դառնում պատմութեան անցումային շրջաններում՝ կապուած իշխանափոխութեան եւ նոր գաղափարախօսութեան հետ: Վրաստանի պատմութեան կնճռոտ հարցերից մեկը՝ 1783 թ. Գէորգիեւսկի դաշնագիրը, նրա դերն ու նշանակութիւնն այդ երկրի պատմութեան համար, շուրջ 200 տարի վրացական, ինչու չէ՝ նաեւ ռուսական, հասարակական-քաղաքական մտքի սուր քննարկման թիրախում է, մասնաւորապէս՝ յետխորհրդային շրջանում:

Սոյն յօդուածում ներկայացւում է «Վրաստանի նկարագրութիւնը կամ Քարթլիի եւ Կախէթի թագաւորութեան քաղաքական դրութեան նկարագրութիւնը» ռուսերէն պատմագրական երկում վերոյիշեալ դաշնագրի կնքման եւ դրանից յետոյ Արեւելեան Վրաստանի շուրջ ստեղծուած ռազմա-քաղաքական իրավիճակի լուսաբանումը: Ընդ որում, երկի հեղինակը Գէորգիեւսկի դաշնագրի կնքման արդիւնքում վրաց Հերակլ Բ արքայի արքունիքում Ռուսական կայսրութեան ներկայացուցիչ (ռէզիդենտ) եւ բարձրաստիճան զինուորական Ստեպան Բուռնաշեւն է[1]:

Այսրկովկասի, մասնաւորապէս՝ նրա հիւսիս-արեւելեան եւ կենտրոնական հատուածների քաղաքական պատմութեան համար ԺԸ դ. երրորդ քառորդը բախտորոշ նշանակութիւն է ունեցել: ԺԸ դ. 80-ական թթ. երկրորդ կէսում Իրանը շարունակում էր գոյութիւն ունենալ իբրեւ Պարսից թագաւորութիւն՝ «...առանց թագաւորի. եւ իւրաքանչիւր նախարար իշխէ իւրում գաւառի, գրեթէ ամենեքին լեալ ինքնագլուխ»[2]: Նրա կազմի մէջ մտնող Արեւելեան Այսրկովկասի խանութիւնները (Դերբենդի, Շաքիի, Շամախիի, Ղուբայի, Բաքուի) եւ երկրամասի կենտրոնում գտնուող վրացական վարչա-քաղաքական կազմաւորումները որոշակի ինքնավարութիւն ստանալուն զուգահեռ՝ ձեռք էին բերել Իրանի տէրութեան, Ռուսական եւ Օսմանեան կայսրութիւնների հետ ինքնուրոյն յարաբերութիւններ կառուցելու հնարաւորութիւն: Անհրաժեշտ էին դիւանագիտական այնպիսի հմտութիւններ, որոնք թոյլ կը տային պահպանել խանութիւնների անկախութիւնը եւ հոգալ սեփական անվտանգութեան խնդիրները: Նշուած ժամանակամիջոցում այդ խնդիրների ինք-

---

1 **С. Бурнашев,** *Описание областей Адребижанских в Персии и их политическаго состояния,* Курск, 1793. Ս. Դ. Բուռնաշեւի կեանքի եւ գործունէութեան մասին մանրամասն տե՛ս *Отчаръ աղբիւրները Հայաստանի եւ յարակից երկրների մասին,* հտ. 19. Ռուսական աղբիւրներ, պր. Ա. Ստեպան Բուռնաշեւ, Նկարագրութիւն Պարսկաստանում ադրեբիժանական նահանգների եւ նրանց քաղաքական կարգավիճակի, Թարգմանութիւնը բնագրից, ներածութիւնը եւ ծանօթագրութիւնները՝ **Գ. Ժ. Մխիթարեանի,** Երեւան, 2020:

2 **Հ. Միքայէլ Չամչեանց,** *Հայոց պատմութիւն (սկզբից մինչեւ 1784 թուականը),* հտ. Գ, Երեւան, 1984, էջ 861:

նուրոյն իրագործումը դարձել էր գրեթէ անհնար. անհրաժեշտ էր ուժեղ եւ յուսալի դաշնակից գտնել: Իրանում միասնական պետութեան բացակայութեան պայմաններում դաշնակիցներ ձեռք բերելու համար պիտի ընտրութիւն կատարուէր Օսմանեան եւ Ռուսական կայսրութիւնների միջեւ: Թշնամական օղակի մէջ գտնուող Քարթլի-Կախէթի միացեալ թագաւորութեանն արեւմուտքից շարունակում էր սպառնալ գիշատիչ հակումներով առաջնորդուող Օսմանեան կայսրութիւնը, հարաւից ու արեւելքից՝ Իրանը, որն Այսրկովկասը համարում էր իր օրինական կալուածքը, իսկ հիւսիսից՝ Կովկասեան լեռնաշղթայի կողմից, սպառնում էին բազմաթիւ ռազմատենչ ցեղերը, որոնք փոթորկի պէս աւերիչ ասպատակութիւններ էին կատարում դէպի Վրաստան եւ Հայաստան՝ կողոպտելով ու գերեվարելով նրանց բնակչութեանը:

Ըստ մի խումբ ռուս հետազօտողների՝ Գէորգիեւսկի դաշնագրի կնքման պատճառներից կարելի է համարել Հերակլ Բ-ի արտաքին քաղաքականութեան եւրոպական ուղղութեան ակտիւացումը[3]: Յայտնի է, որ 1782 թ. սեպտեմբերին վրացական մի դեսպանութիւն ուղեւորւում է Հռոմէական Սրբազան կայսրութիւն՝ եւրոպական պետութիւնների հետ քաղաքական կապեր հաստատելու նպատակով: Ռուսական կայսրութեան պատասխանը չի ուշանում. Եկատերինա Բ. կայսրուհին հրամայում է արգելել Վրաստանի «եւրոպական մայրաքաղաքների հետ ունեցած ցանկացած յարաբերութիւն եւ սկսել միութենական պայմանագրի մշակման գործընթացը»[4]:

Սակայն ինչպէս իրաւացիօրէն նկատում է հետազօտող Օ. Պ. Մարկովան, Գէորգիեւսկի դաշնագրի կնքումը ռուսական կովկասեան քաղաքականութեան բարդ համակարգի բաղկացուցիչ մի մասն էր: Նրա հիմքը կազմում էր 1760-ական թուականներին ռուսական դիւանագիտութեան առաջ քաշած՝ Ռուսական կայսրութեան հարաւային սահմաններին հաւատարիմ տիրակալներից անվտանգային գօտու՝ «պատնէշի» (ռուս.՝ барьер), ստեղծման գաղափարը: Այդ «պատնէշը» կոչուած էր՝ դառնալու Իրանի, Օսմանեան եւ Ռուսական կայսրութիւնների միջեւ իւրատեսակ աշխարհաքաղաքական գօտի[5]:

Ըստ էութեան, դաշնագրի կնքումը սերտօրէն կապուած էր Ղրիմի խանութիւնը Ռուսական կայսրութեանը միաւորելու խնդրի հետ: Արդէն 1782 թ. պարզ դարձաւ, որ օսմանեան տէրութիւնը երբեք չի համակերպուի Ղրիմի խանութեան կորստի հետ եւ այն ռուսական հովանու ներքոյ անկախ վարչա-քաղաքական միաւորի վերածելն անհնար է: Ռուսական դիւանագիտութիւնը հարցը ձեւակերպեց հետեւեալ կերպ. անհրաժեշտ է Ղրիմի խանութիւնն ուղղակի միացնել կայսրութեանը: Հարցի նման լուծումը յղի էր ռուս-թուրքական վերահաս պատերազմով, ուստի Գ. Պոտեմկինն առաջարկում է վերադառնալ Այսրկովկասում 1768 թ. ռազմական «դիվերսիայի» կազմակերպման գաղափարին[6]: Այս ծրագիրը եւ այսրկովկասեան յուսալի տիրակալներից «պատնէշի» ստեղծումը փոխկապակցուած էին: Ռուս պատմաբան

---

3 **И. К. Шаов, З. А. Жаде, Ф. В. Чирков**, Установление российского протектората над Картли-Кахетинским царством в 1783 году: международно-правовые аспекты, – «Юридические науки», № 3, 2021 (Пермь), с. 28.

4 Грамоты и другие исторические документы XVIII века, относящиеся к Грузии. Под ред. **А. А. Цагарели**, ординарного профессора Императорского С.-Петербургского университета, т. II, вып. 2, С 1769 по 1801 год, СПб., 1902, с. 30.

5 **О. П. Маркова**, Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, Москва, 1966.

6 Տե՛ս **М. Волхонский**, «Мы держимся здесь... одним сщастием нашея великия государыни». Русский корпус генерал-майора Г. Г. Тотлебена в Грузии (1768-1772), – «Военно-исторический журнал», 2017, № 7(687).

Վ. Վ. Դեգոեւն իրաւացիօրէն նշում է, որ Սանկտ Պետերբուրգում, մինչեւ Ղրիմի հիմնախնդրի վերջնական հանգուցալուծումը, «չէին շտապում վիճել» ո՛չ Իրանի տէրութեան, ո՛չ էլ Օսմանեան կայսրութեան հետ: Ռուսական իշխանութիւնները հանդէս էին գալիս Այսրկովկասում ստատուս քվոյի պահպանման օգտին[7] եւ չէին շտապում բացայայտ հովանաւորել կողմերից որեւէ մեկին: Այսրկովկասի եւ մերձկասպեան խանութիւնների նկատմամբ իրականացուող պասիւ՝ «անտարբերութեան քաղաքականութիւնը» փոխարինւում է ակտիւ դիւանագիտութեամբ[8]:

Ղրիմի խանութեան Ռուսական կայսրութեանը միանալու ուէսկրիպտում (1783 թ. Ապրիլի 8) Եկատերինա կայսրուհին գրում էր, որ անհրաժեշտ է գրաւել Դերբենդը, «ամրապնդել վրաց թագաւորին եւ հայերին իրենց տիրոյթներում թուրքերից ու պարսիկներից անկախութեան հաստատման համար եւ նրանցից Ռուսաստանի համար ամուր պատնէշ ստեղծել», իսկ պատերազմի դէպքում՝ հայերի ու վրացիների հետ միասին «թուրքական շրջաններում դիվերսիա իրականացնել»[9]: Սակայն 1783 թ. Դեկտեմբերի 28-ին կնքւում է ռուս-թուրքական կոնվենցիան, որով Օսմանեան կայսրութիւնը ճանաչում էր Ղրիմի խանութեան միացումը Ռուսական կայսրութեանը[10]: Դրանով ռուսական ռազմանաւերի համար ուղիղ ճանապարհ էր բացւում դէպի Օսմանեան կայսրութեան մայրաքաղաքի մատոյցներ[11]:

Աշխարհաքաղաքական նոր իրողութիւններում այսրկովկասեան տիրակալներից ռազմական «պատնէշի» ստեղծումը ստանում է նոր բովանդակութիւն՝ զսպել Օսմանեան կայսրութեան ռազմատենչ նկրտումները եւ որոշ ժամանակով հետաձգել թուրքական ռէվանշը: Ռուսական կառավարող շրջանակները ռազմա-քաղաքական «պատնէշի» ստեղծման ճանապարհին կարեւոր քայլ էին համարում սկզբում Քարթլի-Կախէթի միացեալ թագաւորութեան, ապա Իմերէթի թագաւորութեան նկատմամբ ռուսական հովանաւորութեան հաստատումը:

1783 թ. կնքուած Գէորգիեւսկի դաշնագրով Արեւելեան Վրաստանը հրաժարւում էր ինքնուրոյն քաղաքականութիւնից եւ ամբողջութեամբ յայտնւում ռուսական ազդեցութեան ոլորտում[12]: Հերակլը դաշնագիրը վաւերացնում է 1784 թ. Յունուարի 24-ին, իսկ Յունուարի 28-ին նա հաւատարմութեան երդում տուեց ռուսաց կայսրուհուն: Սակայն ռուսական զօրախումբը Վրաստան էր մտել դեռեւս 1783 թ. Նոյեմբերի 3-ին:

Հերակլ Բ-ի համար այդ դաշնագիրը ոչ այնքան պաշտպանական էր, որքան յարձակողական, որով նա փորձում էր կեանքի կոչել իր ազդեցութեան ընդլայնումն ու դիրքերի ամրապնդումը տարածաշրջանում. Երեւանի, Գանձակի խանութիւնների նկատմամբ գերիշխելու իրաւունք, Ախալցխայի ու Կարսի միացում իր տիրոյթներին եւ լեզգիների կողմից նուա-

7 **В. Дегоев**, Большая игра на Кавказе, Москва, 2003, с. 26.

8 Հմմ. **О. П. Маркова**, Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, с. 159.

9 Бумаги императрицы Екатерины II, хранящиеся в государственном архиве министерства иностранных дел,– «Сборник Русского исторического общества», т. 27, СПб., 1880, с. 240-246.

10 Бумаги Булгакова. 1779-1792 гг., – «Сборник Русского исторического общества», т. 47, СПб., 1885, с. 100- 101.

11 **С. Жигарев**, Русская политика в Восточном вопросе (ее история в XVI-XIX веках, критическая оценка и будущие задачи), т. I, Москва, 1896, с. 225.

12 Տե՛ս **Н. С. Киняпина, М. М. Блиев, В. В. Дегоев**, Кавказ и Средняя Азия во внешней политике России (вторая половина XVIII – 80-е годы XIX в.), Москва, 1984, с. 49-51.

ճուած բոլոր տարածքների վերադարձ[13]: Կովկասեան գծի հրամանատար գեներալ-պորուչիկ Պ. Պոտեմկինը վրացական կողմի պահանջները դիտարկում էր որպէս ռուսական կայսերական գահի համար ընդունելի[14], իսկ նրա ազգական Գ. Պոտեմկինը Եկատերինա Բ-ին գրում էր, որ երբ լեզգիներ զէնքով կը հնազանդուեն, այդժամ Վրաստանն այնքան կը հզօրանայ, որ հակակշիռ կը դառնայ Բարձր Դռանը, աւելին՝ «օգտակար է վրաց թագաւորին տալ մինչեւ Կասպից ծով ձգուող հողերի մի մասը»[15]: Արդէն Գէորգիեւսկի դաշնագրով Ռուսական կայսրութիւնը ճանաչում էր Հերակլ Բ-ի գերիշխանութիւնը այսրկովկասեան մի շարք տիրոյթների նկատմամբ, ինչն ամրագրուած էր նաեւ դաշնագրի տեքստում՝ վրաց թագաւորի տիտղոսում. «Աստծոյ ողորմութեամբ եւ Ձեր կայսերական-Մեծութեան բարեհոգութեամբ Քարթլիի թագաւոր, Կախէթի թագաւոր, Սամցխէ-Սաաթաբագոյի ժառանգական տիրակալ, Ղազախի մթաւար, Բորչալուի մթաւար, Շամշադիլուի մթաւար, Կակի մթաւար, Շամախիի մթաւար եւ Շիրուանի մթաւար, Գանձակի ու Երեւանի տիրակալ եւ կառավարիչ Հերակլ Երկրորդ»[16]:

Դաշնագրի ստորագրումը ռուսական կովկասեան քաղաքականութեան համար շրջադարձային էր, քանի որ ամրապնդում էր վերջինիս ռազմա-քաղաքական դիրքերը տարածաշրջանում: Այդ հանգամանքով պայմանաւորուած՝ Ռուսական կայսրութիւնը կովկասեան տիրակալների եւ խաների նկատմամբ առաւել կոշտ դիրքորոշում էր որդեգրել: Այսպէս, Ղարաբաղի Իբրահիմ խանը հայկական թագաւորութեան վերստեղծման Ռուսաստանի ծրագրերից վախենալով[17], իր հնազանդութիւնն էր յայտնում ռուսական գահին եւ պատրաստակամ էր հարկ վճարել, իսկ իշխան Պ. Պոտեմկինը նկատում էր, որ «հարկը, որ հարկում է ռուսական կայսրուհին՝ հաւատարմութիւնն է»[18]:

Խորհրդային պատմագիտութեան կարծրատիպի համաձայն՝ Այսրկովկասում «ժողովրդական լայն զանգուածները» թուրքական ագրեսիայից իրենց փրկութիւնը կապում էին միայն Ռուսաստանի հետ, իսկ խաները թուրք-իրանական տիրապետութեանը նախընտրում էին ռուսական իշխանութիւնը[19]: Ինչ վերաբերում է «ժողովրդական լայն զանգուածներին», ապա դրանց տակ պէտք է հասկանալ ոչ մահմեդականներին՝ հայերին, հրեաներին, հնդիկներին եւ իրանալեզու ժողովուրդներին, որոնք դրդուած խաների կամայականութիւններից՝ իրենց փրկութիւնը կարող էին կապել Ռուսական կայսրութեան հետ: Սակայն ակնյայտ է, որ այսրկովկասեան խաները նպատակ չունէին ամբողջովին ընդունելու Իրանի տէրութեան, Ռուսական եւ Օսմանեան կայսրութիւններից որեւէ մեկի գերիշխանութիւնը՝ կորցնելով սեփական ինքնիշխանութիւնը: Այդ մասին էին փաստում 1783 թ. Յունուարին

13 Из истории российско-грузинских отношений: к 230-летию заключения Георгиевского трактата, Сборник документов. Отв. ред. **А. Н. Артизов**, Москва, 2014, с. 124-126.

14 Մեջբերումն ըստ՝ **О. П. Маркова**, Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, с. 176.

15 Из истории российско-грузинских отношений: к 230-летию заключения Георгиевского трактата, с. 257.

16 История Грузии, т. I, С древнейших времен до 60-х годов XIX века, Под ред. **Н. А. Бердзенишвили**, Тбилиси, 1962, с. 437.

17 **Г. Мхитарян**, Идея создания армянского и албанского государств во второй половине 18-го века,– «Caucaso-Caspica»: Труды Института востоковедения РАУ, вып. 4 (2019), Под ред. **Г. Асатряна**, Ереван, 2019.

18 **П. Бутков**, Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г., ч. II, СПб., 1869, с. 144.

19 **А. Р. Иоаннисян**, Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Ереван, 1958, с. XV.

ռուսական պաշտօնական գրագրութիւնները: Ըստ այդ հաղորդումների, ի տարբերութիւն Ֆաթհ Ալի խանի՝ հասարակ ժողովուրդն անհամբերութեամբ էր սպասում ռուսական զօրքի հնարաւոր ներխուժմանը տարածաշրջան[20]:

Արեւելեան Այսրկովկասի եւ Դաղստանի տիրակալների մօտ առաջացած խուճապային տրամադրութիւնները ստիպում էին նրանց դիմել Ռուսաստանին եւ քաղաքական հովանաւորութիւն խնդրել[21]: Ինչպէս արդարացիօրէն նշում է Ս. Բուռնաշեւը, Արեւելեան Այսրկովկասի «[խաները] անհանգստացան, որ հնարաւոր է զրկուեն իրենց տիրոյթներից»[22]:

Խաների քաղաքական կեցուածքն աւելի քան կանխատեսելի էր, քանի որ Արեւելեան Այսրկովկասի կիսանկախ խանութիւնների տիրակալների համար օրակարգային խնդիր էր սեփական անվտանգութեան ապահովումը: Վերադարձն իրանական պետական համակարգ սպառնում էր կարգավիճակի կորստով: Հեռաւոր եւ նոյն կրօնը դաւանող Կոստանդնուպոլսի գերագոյն իշխանութեան ճանաչումն առաւել նախընտրելի էր: Գեներալ Ի. դը Մեդեմին ներկայացրած զեկուցագրում Ղզլարի պարետ Ի. Ֆոն-Շտենդերը նշում էր, որ դաղստանեան տիրակալները հնարաւորութեան դէպքում կը պաշտպանեն թուրքական կողմին, բացառութեամբ Ֆաթհ Ալի խանի, որը կարող էր հաւատարիմ լինել Ռուսաստանին. նա ընդգծում էր Ղուբայի խանի միւս տիրակալներից դաւանանքով տարբեր (իմա՛ շիա) լինելու հանգամանքը[23]: Աստրախանցի վաճառական Մ. Կնեազեւը, յղում կատարելով տեղացի հայերին եւ պարսիկներին, 1770 թ. Նոյեմբերին հիւպատոս Մ. Սուլեակովին հաղորդում էր, որ Ֆաթհ Ալի խանը, լեռնականներին սիրաշահելու նպատակով, դարձել էր սուննիադաւան[24]:

Արեւելեան Վրաստանի նկատմամբ ռուսական հովանաւորութեան հաստատումը խանութիւնների ինքնուրոյնութեանն ուղղուած սպառնալիք էր դիտւում: Իրավիճակն աւելի է սրւում, երբ ռուսական քաղաքական ներկայութիւնն Արեւելեան Վրաստանում ռազմական ուժերի տեղակայմամբ է ամրապնդւում: Ռուսական կայսրութեան արտաքին քաղաքականութեան համար ԺԸ դ. 80-ական թթ. բնութագրւում են որպէս Կովկասում ռուսական իշխանութեան վերականգնման ժամանակաշրջան[25]: Սակայն ռուսական զօրքի (թէեւ փոքրաթիւ[26]) տեղակայումը Արեւելեան Վրաստանում խախտում էր ուժերի յարաբերակցութիւնը տարածաշրջանում[27] թէ՛ այսրկովկասեան տիրակալների շրջանում, թէ՛ Իրանի տէրութեան, Ռուսական եւ Օսմանեան կայսրութիւնների աշխարհաքաղաքական շահերի համատեքստում:

---

20 **Г. Цинцадзе**, Материалы к истории русско-грузинских отношений (1782-1791), – «Исторический вестник», № 23-24, Тбилиси, 1970, с. 20.

21 **П. Бутков**, Материалы для новой истории Кавказа, с. 134-135.

22 Օտար աղբիւրները Հայաստանի եւ յարակից երկրների մասին, հտ. 19. Ռուսական աղբիւրներ, պր. Ա. **Ստեպան Բուռնաշեւ**, էջ 43:

23 Русско-дагестанские отношения в XVIII – начале XIX в. Сборник документов, Отв. ред. **В. Г. Гаджиев**, Москва, 1988, с. 154.

24 Архив внешней политики России, ф. Сношение России с Персией, 1771, д. 150, лл. 11об.-12.

25 **F. Kazemzadeh**, *Iranian relations with Russia and the Soviet Union, to 1921*, The Cambridge History of Iran: From Nadir Shah to the Islamic Republic, vol. VII, Cambridge, 1991, p. 325.

26 Դաշնագրով երկու եգերական գումարտակ էր եկել Վրաստան, որից յետոյ ժամանում է նաեւ կոմս Պ. Պոտեմկինը՝ բաւական «ուժեղ մի զօրախմբով»: Շուտով նա հեռանում է Կովկասեան գիծ՝ իրեն փոխարինող նշանակելով գեներալ Սամոյլովին (**С. А. Тучков**, *Записки 1766-1808. Кавказская война: истоки и начало. 1770-1820 годы*. Серия: Воспоминания участников Кавказской войны XIX века, СПб., 2002, с. 238).

27 **F. Kazemzadeh**, *Iranian relations with Russia and the Soviet Union*, p. 328.

Միւս կողմից, դաշնագրով Ռուսաստանը Օսմանեան կայսրութեան հետ բաւական երկար սահման էր ստանում Ախալցխայի փաշայութեան եւ Իմերէթի թագաւորութեան հատուածում: Հետեւանքներն իրենց երկար սպասեցնել չտուեցին, եւ 1784 թ. աշնանը թուրքական կողմը դիւանագիտական նոտայով յայտարարեց, որ «Գորջիստանը, Մենգրէլը... ինչպէս նաեւ մահմեդական հողերը, մասնաւորապէս՝ Թուրքիային հաւատակից Դաղստանը» հանդիսանում են սուլթանի հպատակները[28]: Հարցը կարգաւորելու համար ռուսական իշխանութիւնների ձեռնարկած դիւանագիտական քայլերը ցանկալի արդիւնք չտուեցին:

Իրաւացի է Մ. Ա. Վոլխոնսկին, երբ վերլուծելով 1780-ական թթ. ռուսական կովկասեան քաղաքականութիւնը եզրակացնում է, որ Գ. Պոտեմկինի 1784-1785 թթ. թոյլ տուած մի շարք բացթողումների պատճառով «պատնէշի» ստեղծումը ձախողուեց: Ըստ հետազօտողի՝ Ռուսաստանը լաւ չէր հաշուարկել Արեւելեան Վրաստանի նկատմամբ Օսմանեան կայսրութեան հնարաւոր ճնշումների իրագործումը եւ գերագնահատել էր Հերակլ Բ-ի ռազմա-քաղաքական կարողութիւնները: Այդպէս, տարածաշրջանը թուրքական պետութեան հետ խաղաղ գոյակցութեան նախապատրաստելու փոխարէն՝ այսրկովկասեան տիրակալներից «պատնէշի» ստեղծման փորձը էլ աւելի սրեց նրա հետ յարաբերութիւնները[29]: Հեղինակը մեծ տեղ է յատկացնում 1785 թ. Աւարիայի Ումմա խանի Վրաստան կատարած արշաւանքին՝ նկատի առնելով, որ խանի աւերիչ արշաւանքը տեղի է ունեցել Օսմանեան սուլթանի դրդմամբ եւ Ախալցխայի Սուլէյման փաշայի անմիջական մասնակցութեամբ:

Իսկ դաղստանցի պատմաբան Շ. Խապիզովը գրում է. «Երեք մեծ երկրներից իւրաքանչիւրն իր շահն էր հետապնդում Կովկասում եւ տուեալ դէպքում Աւարիայի կառավարչի Այսրկովկաս ռազմական արշաւանք իրականացնելու նպատակադրումն անհանգստացրեց Օսմանեան կայսրութեան ղեկավարութեանը, որը խաղաղութեան մէջ էր Ռուսաստանի հետ ու զգուշանում էր նրա արձագանքից այդ դէպքերին»[30]: Ըստ հետազօտողի՝ Քարթլի-Կախէթի թագաւորութեան եւ Աւարիայի կառավարչի միջեւ յարաբերութիւնները լարուել էին Գէորգիեւսկի դաշնագրի կնքումից եւ ռուսական զօրախմբի Թիֆլիս մուտքից անմիջապէս յետոյ: Արդէն 1784 թ. վերջին Հերակլ Բ արքան փորձում է ռուսական օժանդակ ուժերի հետ ներխուժել այսպէս կոչուած Ճարի հանրապետութեան տարածք[31], որը մտնում էր կոնֆեդերացիայի մէջ՝ աւար խանի իշխանավարմամբ: Վրաց արքայի նպատակն էր աւերել ու հրկիզել աւարական գիւղերը, կոտորել եւ գերեվարել բնակչութեանը: «Արքան խնդրում էր Վրաստան ուղարկել հետեւակի վեց գունդ ողջ սպառազինութեամբ,– գրում է պատմաբան Ն. Ֆ. Դուբրովինը,– եւ երբ մերժում է ստանում, ապա խնդրում է աւերել Ճարն ու Բելոկանը, լեզգիական գլխաւոր բնակավայրերը այն երկու գումարտակներով, որոնք արդէն գտնւում էին Վրաստանում»[32]: Փաստօրէն, Հերակլը փորձում էր

---

28 **Э. Г. Джахиева**, Договоры России с Турцией, Ираном и правителями Кавказа. 1774-1813 гг., Махачкала, 2006, с. 44.

29 **М. Волхонский**, Военная политика Российской империи в Закавказье в 1783-1796 гг., – «Военно-исторический журнал», № 9, 2018, с. 16.

30 **Ш. Хапизов**, Ума-нуцал (Умахан) Великий (очерк истории Аварского нуцальства второй половины XVIII в.), Махачкала, 2013, с. 84.

31 Ճարի մասին մանրամասն տե՛ս **Ш. Хапизов**, Поселения Джарского общества (историко-географическое и этнографическое описание микрорегиона в Восточном Закавказье), Махачкала, 2011.

32 **Н. Ф. Дубровин**, История войны и владычества русских на Кавказе, т. 2 [От принятия Грузии

Գէորգիեւսկի դաշնագրի ընձեռնած հնարաւորութիւններն առաւելագոյնս օգտագործել ի շահ իր երկրի, ռուսների միջոցով լուծել Քարթլի-Կախէթի թագաւորութեան անվտանգային հարցերը եւ քաղաքական գերիշխանութիւն հաստատել ողջ Հարաւային Կովկասում:

Անշուշտ, դաղստանեան տիրակալները հասկանում էին հարցի լրջութիւնը եւ իրենց տիրոյթների նկատմամբ վտանգը զգալով՝ հակայարձակ են լինում: 1785 թ. Աւարիայի Ումմա խանը աւերիչ արշաւանք է կատարում Վրաստան եւ մեծ աւարով հեռանում Ախալցխայի փաշայի մօտ ձմեռելու, ապա 1786 թ. գարնանը Երեւանի վրայով վերադառնում է Դաղստան[33]: Վրաստանում 2600 սպանուած ու վիրաւոր տուած խանը վերադառնում էր 7000-անոց բանակով եւ, վախենալով ռուս-վրացական զօրքերի հետ հանդիպումից, որոշում է անաղմուկ հեռանալ Երեւանի խանութիւնով: Նա Գանձակի բնակիչներից 5000 «ռազմատուգանք» է հաւաքում, ապա զօրքը թողնում Կուր գետի ափին եւ ինքն անցնում է Շուշիի խանի մօտ[34]: Հաւանաբար հենց այդ ժամանակ աւար խանն իր քրոջը կնութեան է տալիս Ղարաբաղի խանին: 1786 թ. Յունիսի 27-ին նա վերադառնում է Խունզախ[35]:

Ումմա խանը խելացի քաղաքականութիւն էր վարում նաեւ այդ նոյն ժամանակ Կովկասում հակառուսական շարժման առաջնորդ չէյխ Մանսուրի (Ուշուրմայի) նկատմամբ, երբ վերջինս օգնութիւն է խնդրում աւարներից: Պահպանուել է աւար խանի նամակը չէյխ Մանսուրին, որտեղ ասւում է. «Դու ինձ եւ դաղստանցի ժողովրդին առաջարկում ես քեզ ենթարկուող չեչենական շրջանների բնակիչների նման, որոնք այնտեղից գնացին Ղրիմ՝ ռուսների դէմ կռուելու, որպէսզի ենթարկուենք մահմեդական կրօնին: Բայց ռուսական պետութեան ուժը մեծ է»: Ապա խանը նշում էր, որ Ղուրանն ասում է՝ պատերազմիր նրանց հետ, երբ դա կարող էք անել ուժով, սակայն դաղստանցիներն այդ ուժն ու կազմակերպուածութիւնը չունեն: Նրանք ընդունակ են միայն 4-5 օրով աւերիչ արշաւանք իրականացնել վրացական հողերի դէմ, ինչով էլ դաղստանցիներն ապրում են: «Սակայն յայտնի է, որ ռուսական տէրութեան նկատմամբ նման գործողութիւններն արդիւնքի չեն բերի եւ կը դառնան դաղստանցիների մահուան պատճառ, – շարունակում էր կառավարիչը, – Հետեւաբար ես չեմ կարող քո գործում դաշնակից լինել քեզ»[36]:

1785 թ. Ումմա խանի Վրաստան կատարած արշաւանքից յետոյ աշխարհաքաղաքական իրավիճակն Այսկովկասում որոշակի յստակեցւում է: Դաղստանեան տիրակալները միշտ եղել էին օսմանեան իշխանութիւնների կարեւոր յենարանը Կովկասում, եւ այժմ, գործընթացների բիւրեղացման հետեւանքով, աւար կառավարիչը դառնում է տարածաշրջանում Օսմանեան կայսրութեան գլխաւոր աջակիցն ու նրա քաղաքականութեան համակարգողը եւ յաջողութեան գրաւականը: Շուտով Բայազէտի, Նախիջեւանի ու Շուշիի վրայով Դաղստան է գալիս սուլթանի բանագնացը՝ իր հետ բերելով 80000 ոսկի եւ 30 խալաթ՝ թանկարժէք կտորներից, սամոյրի մորթիներով զարդարուած: Անձամբ խանի հա-

33 Жизнь Артемия Араратского, уроженца селения Вагаршапат близ горы Арарат, ч. II, СПб., 1813, с. 31.

34 **П. Бутков**, Материалы для новой истории Кавказа, с. 189-190.

35 **П. М. Алибекова**, Жизнь и творческое наследие Дибир-кади из Хунзаха, Махачкала, 2009, с. 185.

36 **Гасан-эфенди Алкадари**, Асари-Дагестан (Исторические сведения о Дагестане), Пер. и примечания **А. Г. Гасанова (Алкадари)**, Махачкала, 1994, с. 98-99.

под покровительство России до вторжения персов 1794 г.], СПб., 1886, с. 46.

մար 8000 ոսկի, թանկարժէք քարերով զարդարուած թուր եւ «սոբոլի» մուշտակ էր ուղարկուել՝ «նրանց այստեղ ռուսների դէմ գործողութիւնների դրդելով»[37]: Փաստօրէն Ումմա խանը դառնում էր Կովկասում հակառուսական դաշինքի ձեւաւորման կարեւորագոյն օղակներից մեկը:

Լեզգիների շարունակուող ասպատակութիւնները ստիպեցին Հերակլ Բ արքային 1786 թ. բանակցութիւններ սկսել թուրքական իշխանութիւնների հետ՝ ի դէմս Սուլէյման փաշայի: Օսմանեան կայսրութիւնը խոստանում էր դադարեցնել լեզգիների յարձակումները վրացական շրջանների վրայ՝ փոխարէնը Վրաստանից պահանջելով թուրքական տիրապետութեան ճանաչում[38]: Արդիւնքում՝ 1786 թ. Հոկտեմբերին կնքուեց վրաց-թուրքական պայմանագիրը, որով Հերակլը պարտաւորւում էր 3000-ից աւելի ռուսական զօրք չպահել իր երկրում, իսկ Սուլէյման փաշան խոստանում էր կանխել լեռնականների ասպատակութիւնները վրացական հողերում:

Այսպիսով, ընդամենը մեկ տասնամեակում Հերակլը, գտնուելով պարսկական իրաւասութեան ներքոյ, հովանաւորութեան մասին միջազգային պայմանագիր կնքեց Օսմանեան կայսրութեան հետ եւ պրոտեկտորատի մասին դաշնագիր՝ Ռուսական կայսրութեան հետ: Վրաց արքան իրանական պետական համակարգից դուրս գալու եւ ուղիղ ենթակայութիւնը վասալիտետի կամ պրոտեկտորատի ինստիտուտով փոխարինելու հնարաւորութիւն էր տեսնում՝ լիակատար անկախութեան ձեռք բերման հեռանկարով[39]:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Վրաստանի քաղաքական դրութեան փոփոխութիւնը Ռուսաստանի բարձր հովանու ներքոյ անցնելու եւ ռուսական զօրքերի [այնտեղ] մուտքի հետեւանքով[40]

Վրաստանի՝ Համառուսաստանեան վսեմ կայսրութեան հովանու ներքոյ անցման վերաբերեալ [Գէորգիեւսկի] դաշնագրի[41] կնքումից յետոյ, երբ մեր զօրքերը մտան այնտեղ, բոլոր ադրեբիժանական[42] ու այնտեղից էլ հեռու՝ Պարսկաստանի խաները խիստ անհանգստացան չնայած նրանց բարեկեցութեան ու շահերի հանդէպ Ռուսաստանի ունեցած բարեացակամութեան մասին մեր հաւաստիացումներին:

[Խաները] անհանգստացան, որ հնարաւոր է զրկուեն իրենց իշխանութիւնից: [Այդ միտքն էլ] նրանց ներշնչում էր օսմանեան Բարձր Դուռը, որը պարբերաբար [տարածաշրջան ուղարկուող] դեսպանութիւնների եւ ոչ քիչ նուէրների բաժանման միջոցով ջանում էր այդ տիրա-

37 **П. Бутков**, Материалы для новой истории Кавказа, с. 196-197.

38 **А. Дудайти**, Место Грузии в «восточной» политике России периода Нового времени, – «Научные ведомости Белгородского государственного университета», Серия: история, политология, 2013, № 22 (165), с. 83.

39 **Э. Джахиева**, Историко-правовые аспекты внешнеполитической деятельности Картли-Кахетии: от Георгиевска 1783 г. до турецко-картлийского договора 1786 г.,– «Юридический Вестник ДГУ», т. 21, 2017, № 1, с. 14.

40 Картина Грузии или описание политического состояния царств Карталинского и Кахетинского, сделанное, пребывающим при его высочестве царе Карталинском и Кахетинском Ираклии Темуразовиче полковником и кавалером **Бурнашевым** в Тифлисе, в 1786 г., Курск, 1793, с. 25-28.

41 Սոյն դաշնագրի ամբողջական բնագիրը տե՛ս Полное собрание законов Российской империи, т. XXI, с. 1013-1017.

42 Հեղինակը նկատի ունի այսրկովկասեան մահմեդական խանութիւնների կառավարիչներին (այդ մասին տե՛ս *Օտար աղբիւրները Հայաստանի եւ յարակից երկրների մասին*, հտ. 19. Ռուսական աղբիւրներ, պր. Ա. **Ստեպան Բուռնաշեւ**, էջ 31-34):

կալներին թագաւորի դէմ տրամադրել, եւ [դա] յաջողեց[43]*:*

[Այսպէս], Շուշիի Իբրահիմ խանը սկզբից գաղտնի, թէեւ ակնյայտ էր, ամեն միջոց գործադրելով, ապա բացայայտ սկսեց վնասել[44]*. նրա [քարոզչական] աշխատանքի հետեւանքով [Վրաստանի դէմ] ըմբոստացաւ Գեանջան*[45]*:*

Երեւանի երիտասարդ խանը, թէեւ անհնազանդութեան համար թագաւորի հրամանով կեանքից զրկուեց իր եղբայրների հետ որսի ժամանակ, իսկ նրա փոխարէն նշանակուել է իր անչափահաս որդին՝ Հուսէյն խանը [ ][46]*: [Հերակլ] թագաւորին հաւատարիմ է, իսկ նրա մայրը Թիֆլիսի քրիստոնեաներից է:*

Սակայն այնտեղ խռովութիւնները, որոնք հրահրում է Սուլէյման փաշան, առ այսօր չեն դադարում: Զանազան պատրուակներով հարկերը չեն վճարում[47]*: [Ուստի] Երեւանը թագաւորական իշխանութիւնից անջատման եզրագծին է*[48]*:*

---

43 «Ընդհանուր առմամբ ադրեբիժանական բոլոր ինքնիշխան խաները միեւնոյն վերաբերմունքն ունեն ռուսական կողմի նկատմամբ: Նրանք վախենում են, որ Ռուսաստանի ուժը կը զրկի իրենց ինքնիշխանութիւնից կամ աւելի ճիշտ՝ ինքնուրոյնութիւնից եւ դրա հետ միասին կառավարման եւրոպական ձեւը մուտք կը գործի իրենց սահմանները: Այս երեւակայական վտանգը նրանց ներքաշում է Թուրքիայի հետ համաձայնութեան մէջ [մտնել], որպէսզի խոչընդոտեն Վրաստանում մեր հաստատմանը եւ ոչ միայն հովանաւորչական իշխանութեան տարածմանը, նաեւ՝ դաշինքներ կնքելուն, քանզի պարսիկները կրօնական հակուածութեամբ աւելի մօտ են թուրքերին, քան մեզ», – գրում էր Ստ. Բուռնաշեւը (Օտար աղբիւրները Հայաստանի եւ յարակից երկրների մասին, հտ. 19. Ռուսական աղբիւրներ, պր. Ա. **Ստեպան Բուռնաշեւ**, էջ 41-42):

44 «Վերջին երեք տարին թէեւ իրեն անհաւատարմութեան մէջ կասկածելու զանազան առիթներ է տուել [Իբրահիմ խանը], սակայն բացայայտ ցոյց չի տուել իր անբարեացակամութիւնը եւ ամեն կերպ հաւաստիացնում է արքային իր անկեղծութեան մասին: Խոյի նախկին խան Ահմեդի գաղտնի գլխաւոր դաշնակիցն էր Վրաստանի յարակից մահմեդական ժողովուրդների հետ վերջինիս [Հերակլի] դէմ: Բայց քանի որ Ահմեդ խանը սպանուած է, իսկ նրանց հրահրող տէրութիւնը չիրականացրեց իր խոստումները, ուստի եւ աւելի փափկեց, թէեւ պարսիկների ոչ միայն խոստումներին, այլեւ երդումներին, խարդաւանքին վստահել չի կարելի», – գրում էր Ս. Բուռնաշեւը (Օտար աղբիւրները Հայաստանի եւ յարակից երկրների մասին, հտ. 19. Ռուսական աղբիւրներ, պր. Ա. **Ստեպան Բուռնաշեւ**, էջ 41-42):

45 1748-1750 թթ. Գանձակի խաները, ի թիւս Երեւանի եւ Նախիջեւանի, Արեւելեան Վրաստանից իրենց կախվածութիւնը ճանաչեցին՝ պարտաւորուելով հարկ վճարել (История Грузии, т. I, С древнейших времен до 60-х годов XIX века, Под ред. **Н. А. Бердзенишвили,** Тбилиси, 1962, с. 357-358). Քարթլիի եւ Կախէթի թագաւորութեան միաւորումից յետոյ (1762 թ.) Իրանի տէրութեան կառավարիչ Քերիմ խան Զենդը ճանաչում է Հերակլ Բ-ի իրաւունքները Երեւանի եւ Գանձակի խանութիւնների նկատմամբ (**А. Головин,** Историческое обозрение Грузии, Тифлис, 1864, с. 363). Պ. Պոտեմկինին 1784 թ. Փետրուարի 15-ին Հերակլի գրած նամակից յայտնի է դառնում, որ Ս. Բուռնաշեւը կազմել էր Այսրկովկասի քարտէզը, որտեղ Գանձակի խանութիւնը ներառուած էր Արեւելեան Վրաստանի սահմանների մէջ (տե՛ս Межкавказские политические и торговые связи Восточной Грузии (конец 60-х – начало 90-х годов XVIII в.). Документы и материалы, вып. I, Материал подобрал и подготовил к печати **В. Гамрекели**, Тбилиси, 1980, с. 140). Նշուած ժամանակամիջոցում անկայուն էր իրավիճակը նաեւ Շաքիի խանութիւնում. Հուսէյն խանի քաղաքականութիւնից դժգոհ ազգականներից Հաջի Աբդ ալ-Ղադերը, նախապէս ստանալով Ղարաբաղի Իբրահիմ խանի աջակցութիւնը՝ 1780 թ. խռովութիւն է բարձրացնում նրա դէմ եւ գրաւում Շաքի քաղաքը: Նա դաշնակցում է Ֆաթհ Ալի խանի հետ ընդդէմ Ղարաբաղի խանի, որին սկսում է աջակցել սպանուած Հուսէյն խանի որդի Մուհամմադ Հասանը: Վերջինս 1784 թ. իշխանութեան է գալիս եւ կոտորում Հաջի Աբդ ալ-Ղադերի ընտանիքը: Այսպիսով՝ 1780-ական թթ. կէսերից Շաքիում թուլանում է Ղուբայի խանի քաղաքական ազդեցութիւնը՝ իր տեղը զիջելով Ղարաբաղի Իբրահիմ խանին:

46 Երեւանի խան (1759-1783 թթ.), որից յետոյ իշխանութիւնը ժառանգական ձեւով փոխանցուել է որդուն՝ Ղուլամ Ալի խան Ղաջարին (1783-1784 թթ.):

47 «Երեւանը [վրաց] արքային հարկի տեսքով տարեկան 6000 թուման էր վճարում, որը հաւասար է 6000 արծաթ ռուբլու» (Օտար աղբիւրները Հայաստանի եւ յարակից երկրների մասին, հտ. 19. Ռուսական աղբիւրներ, պր. Ա. **Ստեպան Բուռնաշեւ**, էջ 52):

48 «Սակայն արքային հաւատարիմ ու նուիրուած Հուսէյն խանի մահից յետոյ նախկին Ղուլամ (Ուլամ) Ալի խանն ու ներկայիս խանը, Խոյի խանի դրդմամբ, տարբեր պատճառաբանութիւններով չեն վճարում: Որքան էլ փորձում են թշնա-

Թագաւորին հպատակ թաթարական ժողովուրդները՝ ղազախները, շամշադիլներն ու շամքորցիները[49] լաւ ռազմիկներ եւ հարուստ մարդիկ են, որոնք, թողնելով իրենց բարեբեր հողերը, տեղափոխուեցին Շուշիի խանի տիրոյթները եւ հիմա ծառայում են նրան՝ ընդդէմ [Հերակլ] թագաւորի[50]:

Բարձր Դուռը չկարողանալով ադրեբիժանական խաների միջոցով դուրս մղել մեր զօրքերն այնտեղից՝ [իր նպատակների համար] սկսեց փողով եւ յուսադրումներով սադրանքներ տարածել վայրի ու շահամոլ Դաղստանում, որպէսզի միասնաբար գործի Ախալցխայի հետ[51]:

Բարձր Դուռը համոզել է Աւարիայի Ումմա խանին՝ հաւաքելով լեռնականների [մեծաքանակ ռազմական] ուժեր արշաւել [վրաց] թագաւորի դէմ: Սուլէյման փաշան իսկապէս մտադիր էր Ումմա խանի հետ միաժամանակ հարուածել [Վրաստանին][52]: Այս մասին դժուար չէր իմանալ, քանի որ դեռեւս նոյն տարուայ գարնանը [նա] 4000-անոց թուրքական զօրք ուղարկեց՝ լեզգիների հետ աւերելու Իբերիան, որն իր անսպասելի յարձակմամբ ներխուժելով՝ գերի տարաւ աւելի քան 600 մարդու: Սակայն վերադարձի ճանապարհին՝ Սուրամի մօտ, մեր եգերական ուժերը գլխովին ջախջախեցին [նրանց], եւ բոլոր գերիներն ազատ արձակուեցին:

Մեկ ամիս անց նա [Սուլէյման փաշան] իր լաւագոյն մարդկանց՝ թուով 3000 հոգի, ուղարկեց՝ պատժելու մեր եգերներին, բայց նրանք նոյնպէս արժանացան նախորդների ճակատագրին: Այդ ընթացքում Ումմա խանը, լեռնական տարբեր ժողովուրդներից 11000-ի [գլուխն անցած], եկաւ [մինչեւ] Ալազան գետը, եւ այստեղ միանալով Վրաստանի անհաշտ

միները մեծ յուսադրումներով եւ սպառնալիքներով օտարել Երեւանը Հերակլ արքայից, մինչ այժմ այդ գործում յաջողութիւն չեն ունեցել: Քանի որ այս գործի նախաձեռնող Խոյի Ահմեդ խանը սպանուած է, ուստի այն գտնւում է [Հերակլ] արքայից կախուածութեան մէջ» (Օտար աղբիւրները Հայաստանի եւ յարակից երկրների մասին, հտ. 19. Ռուսական աղբիւրներ, պր. Ա. **Ստեպան Բուռնաշեւ**, էջ 52):

49 «Նախկինում Գանձակը [Գենջա] Ղարաբաղի մայրաքաղաքն էր, որին պատկանում էին Շամշադիլի ու Շամխորի ղազախները, բայց այս հարիւրամեակի սկզբին նրանք անցան Վրաց արքաների գերիշխանութեան ներքոյ»: ... 1736 թ. Մուղանի դաշտում հրաւիրած ժողովին Գանձակի խաները դէմ են արտայայտւում, որ Նադիր Ղուլի խանն Իրանի շահ հռչակուի (տե՛ս **Միրզա Յուսուֆ Ներսէսով**, Ճշմարտացի պատմութիւն, Թարգմանութիւնը բնագրից, ներածութիւնը եւ ծանօթագրութիւնները **Ք. Պ. Կոստիկեանի**, Եր., 2000, էջ 39): Որոշ ժամանակ անց շահը բորչալու եւ ղազախ ցեղերին յանձնում է Վրաստանի վալիի ենթակայութեանը, Ղարաբաղի մի քանի ցեղերի հրամայում է հեռանալ Խորասան, իսկ Ղարաբաղի հինգ մահալներում հայ մելիքներ է նշանակում, որոնք ենթարկուելու էին շահական արքունիքին՝ թուլացնելով Գանձակի խաների իշխանութիւնը (տե՛ս **Միրզա Յուսուֆ Ներսէսով**, նշ. աշխ., էջ 39):

50 1785 թ., աւարական խանի արշաւանքի հետեւանքով տարածաշրջանի անկայունութիւնից վախեցած, Վրաստանում ապրող Ղազախ եւ Շամխոր «թաթարական» ցեղերի հոծ զանգուածներ տեղափոխւում են Ղարաբաղի խանութիւն, շամշադիլցիներն արտագաղթում են Գանձակ, իսկ շատ հայեր ու վրացիներ՝ Մոզդոկ ու Ղզլար (**Պ. Бутков**, Материалы для новой истории Кавказа, с. 185-188).

51 Դեռեւս 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում օսմանեան սուլթանը փող եւ նուէրներ է խոստանում դաղստանեան տիրակալներին ու Ղուբայի Ֆաթհ Ալի խանին՝ խնդրելով նրանց յանուն հաւատի աջակցել թուրքերին, եւ հաւանութիւն է ստանում (Архив внешней политики Российской империи, ф. Сношение России с Персией, 1771, д. 150, лл. 10-12).

52 Ախալցխայի Սուլէյման փաշային օսմանեան իշխանութիւնները յանձնարարել էին ուշադիր հետեւել Վրաստանի շուրջ ծաւալուող իրադարձութիւններին եւ անհրաժեշտութեան դէպքում դրամական միջոցներ ու նուէրներ տալ դաղստանեան տիրակալներին՝ նրանց դրդելով արշաւանքի դէպի վրացական տիրոյթներ: Յայտնի է, որ նրա միջոցով Ումմա խանին աւելի քան 500 թուրքական դրամ էր փոխանցուել (**В. Г. Гаджиев**, Роль России в истории Дагестана, Москва, 1965, с. 36).

թշնամիների՝ ճարերի ու բելոկանցիների հետ՝ [զօրքերի թիւը հասցրեց] 20000-ի[53]*:*

Թագաւորը վախենալով Ախալցխայի կողմից յարձակումից՝ չի համաձայնում Քարթլիում զօրահաւաք անցկացնել: Կախէթում որոշւում է [Հերակլի] մերձաւորների ջանքերով պաշտպանութիւն կազմակերպել: [Հերակլ թագաւորը] հիմնաւոր պատճառներ ունէր դազախներին, շամշադիլցիներին եւ հպատակ այլ մահմեդական ժողովուրդներին չզօրակոչելու, քանզի յայտնի էր նրանց խռովութեան մասին: Որպէս ռուսական զօրքերի հրամանատարի իմ ոչ մի յորդոր չհամոզեց թագաւորին գալ Քիզիղ՝ մեր զօրքերի մօտ, ու թշնամու վրայ գրոհել Ալազան գետի գետանցի մօտ, քանի որ վախենում էր [վերահաս] դժբախտութիւնից ու [երկրի] վերջնական աւերումից: Բայց Ումմա խանը [եւս] 11000 ընտիր հեծեալներով չհամարձակուեց գրոհել մեր գումարտակների վրայ: Սակայն գիշերն անցնում է Վրաստանի հարթավայրերով ու թաքնւում թուրքական սահմանների մօտ լեռնանցքներում եւ արծաթի մի գործարան է թալանում[54]*:*

Թագաւորը որոշ քանակի զօրք հաւաքելով՝ մեր գումարտակների հետ հետապնդում է նրան, բայց վերջինս չի ցանկանում կռուի բռնուել եւ անցնում է Ախալցխա[55]*: Սուլէյման փաշան տեղից չշարժուեց, քանի որ իր կառավարութիւնից հրահանգ ունէր առժամանակ չգործել: Թագաւորը հաշտուեց Ումմա խանի հետ*[56]*, որովհետեւ տուեալ ժամանակի հանգամանքները Վրաստանում կայունութիւն էին սահմանում*[57]*:*

---

53 Յայտնի է, որ 1785 թ. Աւարիայի Ումմա խանը 20000-անոց զօրքով աւերիչ արշաւանք է կատարել դէպի Վրաստան, եւ Հերակլ արքան, վախենալով Ախալցխայի կողմից օսմանցիների յարձակումից՝ չէր կարողացել ողջ ուժով կռուի դուրս գալ:

54 Այդ նոյն ժամանակ ռուսական ռազմական ուժերը զբաղուած էին Հիւսիսային Կովկասում շէյխ Մանսուրի դէմ պայքարում: Օգտուելով յարմար իրավիճակից՝ աւար խանը ներխուժում է Ախթալայի գաւառ եւ թալանում արծաթի հանքն ու գործարանը, որտեղից վրաց թագաւորը 100000 ռուբլի տարեկան եկամուտ էր ստանում (**В. Е. Романовский**, Очерки из истории Грузии, Тифлис, 1902, с. 269): Դրանից յետոյ նա մեծ աւարով հեռանում է Ախալցխայի փաշայութիւն ձմեռելու՝ ճանապարհին հրի ու սրի մատնելով մնացած բնակավայրերը:

55 Հերակլին խիստ անհանգստացնում է Աւարիայի կառավարչի Ախալցխա մեկնելը, եւ նա ռուսական հրամանատարութիւնից 10000 լրացուցիչ զօրք է խնդրում Վրաստանի անվտանգ պաշտպանութիւնը կազմակերպելու համար: Բացի այդ, Հերակլը խնդրում է մինչեւ 1786 թ. Մարտը 300000 ռուբլի ուղարկել՝ վարկով կամ նուէր, որպէսզի եթէ ռուսական զօրքերը չկարողանան հասնել Վրաստան, ապա այդ գումարով ինքը վարձու զօրք հաւաքի: Սակայն Պոտեմկինը Ումմա խանի հնարաւոր յարձակումը չէզոքացնելու նպատակով 1785 թ. Նոյեմբերին վրաց արքային 1000 ոսկի ռուբլի եւ թանկարժէք ծխախոտի տուփ է ուղարկում (**П. Бутков**, Материалы для новой истории Кавказа, с. 186-187).

56 «Վրաստանը պաշտպանելու անհնարինութիւնն այնքան ակնյայտ էր, որ Հերակլն ի վերջոյ ստիպուած էր բանակցութիւնների մէջ մտնել: Գոռոզ Օմար խանը համաձայնուեց հանգիստ թողնել Վրաստանը, եթէ նրան վճարուի իւրաքանչիւր գերու համար 50 ռուբլի եւ տարեկան 10 հազար ռուբլի ոռճիկ: Ստիպուած էին համաձայնուել այդ պայմաններին, եւ լեզգիներն իսկապէս մաքրեցին վրացական հողերը», – գրում էր Վ. Ա. Պոտտոն (Исторический очерк кавказских войн от их начала до присоединения Грузии, Под ред. генерал-майора **Потто**, Тифлис, 1899, с. 206-207).

57 Ըստ Պ. Գ. Բուտկովի՝ Հերակլ արքայի խօսքերով Վրաստանն այդ ժամանակ գտնւում էր այնպիսի աղէտի մէջ, որպիսին շահ Աբբասի արշաւանքից յետոյ դեռ չէր եղել (**П. Бутков**, Материалы для новой истории Кавказа, с. 185-188).